ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5

հեռ. (+374 10) 59 22 59, էլ. փոստ՝ unibank@unibank.am

Ինտերնետային կայք՝ www.unibank.am

Հաշվետվություն թիվ 05, 09.07.2020թ.

<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ բաժնետերերի
2019թ. տարեկան ընդհանուր ժողովի կայացրած որոշումների վերաբերյալ

29.06.2020թ. համատեղ ներկայության կարգով իրական ժամանակի ռեժիմում Zoom հավելվածի միջոցով <Յունիբանկ> ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից կայացվել են հետևյալ որոշումները՝

1. Հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ 2019թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը:
2. Հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ 2019թ. ֆինանսական հաշվետվությունները:
3. Հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ 2019թ. Ներքին աուդիտի հաշվետվությունը:
4. Խորհրդի քանակական կազմը թողնել անփոփոխ: Վերընտրել <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ Զամանյանին, Հրահատ Արզումանյանին, Դավիթ Փափազյանին, Վարդան Աթայանին, Արտեմ Կոնստանդյանին: Խորհրդի կազմը հաստատել հետևյալ կերպ՝ Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով, Էդուարդ Զամանյան, Հրահատ Արզումանյան, Դավիթ Փափազյան, Վարդան Աթայան, Արտեմ Կոնստանդյան:
5. Սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել, Բանկի՝ ըստ ՀՀՄՍ 1.326.981 հազ. ՀՀ դրամի չափով զուտ շահույթն ուղղել Բանկի հեռանկարային զարգացմանը, գլխավոր պահուստին հատկացնել շահույթի 5%:
6. Հաստատել <Գրանթ Թորնթոն> ՓԲԸ-ին՝ որպես <Յունիբանկ> ԲԲԸ 2020 թվականի ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն անցկացնող անձ:
7. Հաստատել 25.03.2020թ. <Յունիբանկ> ԲԲԸ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշման և <Յունիբանկ> ԲԲԸ Կանոնադրության մեջ փոփոխությունները: «Յունիբանկ» ԲԲԸ Կանոնադրության փոփոխությունները ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գրանցելուց հետո թողարկել 4,778,261 /չորս միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր վաթսունմեկ/ հատ Բ դասի լրացուցիչ փոխարկվող արտոնյալ բաժնետոմս 27% հաստատագրված տարեկան շահութաբաժնով, յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով՝ բաց բաժանորդագրության միջոցով տեղաբաշխմամբ:
8. Հաստատել <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերում փոփոխությունները:

Վարչության նախագահ – գործադիր տնօրեն Մեսրոպ Հակոբյան